«Դավիթ Անհաղթ»
Բժշկական կենտրոն
ՓԲԸ

Медицинский Центр
„Давид Анахт"
ЗАО

Ք. Երևան, Հ. Ներսիսյան 7. Հեռ.՝ 28 – 63-20

N_____ «24» հունիսի
2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Դավիթ Անհաղթ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/4-3»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Հ. Ներսիսյան 7 հասցեով, տնօրենի ընդունարան, մինչև գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվելու պահը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ «Դավիթ Անհաղթ» ԲԿ ՓԲԸ -ի գնումների համակարգող Տ. Սարգսյանը (հեռ. 098-04-04-30):

Հայտերը կբացվեն 2014թ. հուլիսի 4-ին, ժամը 13:30-ին «Դավիթ Անհաղթ» ԲԿ ՓԲԸ-ի շենքում:

Գնման առարկա է հանդիսանում Հավելված 1-ի ներկայացված դեղորայքը /ներպոլիկլինիկական և ներհիվանդանոցային օգտագործման/:

Մատակարարման պայմաններն են՝ ընկերության կողմից պատվերի առաքում պատվերը ընդունելուց հետո երկու օրվա ընթացքում:

«Դավիթ Անհաղթ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար՝ դեղորայքի (որոնք կազմված են 10 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) №1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված №5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված №6): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնում ենք, որ «ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/4-3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային

առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել *<u>ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով</u>* /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հարգանքով՝

Ա. Սիսոյան

Կատ.՝ Տաթևիկ Սարգսյան
Հեռ.՝ /055/ 04-04-87